

## ՎԱՅՈՒ ԶՈՐ ԿԱՄ ԴԱՐԱՎԱԳԵԱԾ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԹԻՒԽՆ

Բարեգործություն

Վայոց-ձոր կամ Դարբաւագեազի ստիլիանական շրջանը կադառության է Շարուր Դարբաւագի գաւառի հիւսիս արևելեան մեծագոյն, լեռնային մասը, Սա տարածում է  $40^{\circ}$  և  $39^{\circ}30'$  հիւսիսային լայնութեան և  $62^{\circ}35'$  ու  $63^{\circ}30'$  արևելեան երկարութեան աստիճանների միջև Նրա սահմաններն են. հիւսիսից՝ Երևաննեան նահանգի Նոր-Բայազէտի գաւառը Սելիմի, Ղարա-ղայա (11178) Սողանկուի (10286), Գիւղալ-գարա (11606) և Դիք-փալաքան լեռներով. արևելքից՝ Գանձակի նահանգի Ջիւլանշիրի գաւառը՝ Մարիե-սըրչալի (11298) և Դաւա-գեօզ լեռներով և նոյն նահանգի Զանգեզուրի գաւառը՝ Ղըսըր-ղազ (9854), Գեաբըրու (10,000), Քիչալ-ղազ (10278), Թիւքի-ղազ (10,282) լեռներով, Հարաւից՝ Երևանի նահանգի Նախիջևանի գաւառը՝ Մինչօր-ղազ, Համառուր-ղազ (8160), և Գեալին-ղայա (9152) լեռներով և Շարուրի ստիլիանական շրջանը՝ Կարմիր-սախկա և Թանգըրու լեռներով. արևմուռքից՝ նախ Շարուրի ստիլիանական շրջանը և այս՝ Երևաննեան նահանգի համառուն գաւառը՝ Բաղդարուզ (6587), Բոդ-ղազ (9546) լեռներով և Նոր-Բայազէտի գաւառը՝ Մաշանլի (9660) և Զան-ղուրբարան (9127) լեռներով:

Ամբողջ սատելիանական շրջանը բռնում է 204,533 դեսետին։  
և 1712 քառակուսի սաժին տարածութիւն, որից 439 դ. 1361 ք.  
ս. գիւղատեղի է. (սրանից էլ 361 դ. 1584 ք. ս. անտաղիվ),  
15 դ. 45 ք. ս. զերեզմանատուն. 1010 դ. 386 ք. ս. ճանա-  
պարհներ. 23368 դ. 1736 ք. ս. արտեր. 390 դ. 1291 ք. ս. այ-  
դիներ. 1277 դ. 200 ք. ս. անտառ. 324 դ. 1150 ք. ս. մարգա-

գետին, 157025 գ. 2092 ք. ս. արօտատեղի. 501 գ. 765 ք. ս. էլ ծածկուած է ջրով, որից 29 դ. 575 ք. ս. ջրանցքների. 352 գ. 720 ք. ս. գետերի, գետակների և ազդիւրների տակ, 10559 գ. 2186 ք. ս. էլ ոչ արդիւնաբերող հող է ։)

Լեռներ. Ամբողջ շրջանը ներկայացնում է մի բարձրաւանդակ, որ հետզհետէ բարձրանալով հիւմիս արևելեան սահմանում հասնում է իւր ամենաբարձր կէտին։ Երեք լեռնաշղթաներ տարածուելով ամբողջ շրջանում և մանաւանդ սահմանագծերում, նրան բազմաթիւ, մեծ և փաքը հովիսների են բաժանում, այսպէս՝ Կոնդուրս-Ալանգէզի լեռնաշղթան շրջապատելով Դարալազեազը՝ ճիւղեր է արձակում նրա մէջ, Սրա Անանուն գագաթից ձգում է գէպի արևմուտք Հարաւային Դարալազեազի լեռնաշղթան, որ բաժանում է Նախիջեան-գետի վուակները Արևելեան Արփաչայի լրաբաշխից։ Սրա երկարութիւնը հասնում է 100 մերուի, լայնութիւնը՝ 1—20 վերստի։ Սրա գլխաւոր գագթներն են.

Թէշալ-դաղ (Շանլի-գեօլ)	10278 ս.ս.
Թիւքի-դաղ	10282.
Սաֆար-խան Սեանգարի	10101.
Շըրէշ.	8414.
Գեալին-դայտ	9152.
Թէշալ-չանա	9053.
Հարադոշ	8585.

Թէտի-դաղ և Սարի-եր-Սըրչալի գագաթների միջև Կօնդուրս-Ալանգէզի լեռնաշղթային արևմուտքից միանում է Հարաւային Գէօգչայի կամ Գէօզալ-դարայի կամ այլապէս Ալանգէզու կոչուած լեռնաշղթան, որ Սելիմի բարձրութեամբ բաժանում է երկու մասի։ Սրա Սար-թափա գագաթից ձգում է գէպի հարաւարևմուտք Հիւսիսային-Դարալազեազի լեռնաշղթան, որ սահմանագծում է Արևելեան Արփաչայի և Ղոյթուլ կամ Ալագեազգետի հոսանքով։ Սրա գլխաւոր գագաթներն են.

Սարի-եր-սըրչալի	11298 ս.ս.
Սար-թափա	11145.
Թէշալ-թափա	10985.
Մուրաս-թափա	10587.
Գէօյ-դաղ.	8715.
Թէքէ-դոլտուրան կամ աւելի ճիշտ Թէքէ-դոնդուրան	9551.

) Труды Закавказского Статистического Комитета. Земельные земли Тифлисской губерніи по даннымъ межевыхъ плановъ утвержденныхъ Тифлисскою Судебною Палатою, գե և մերկ.

Թափասի-զալիկ	8537.
Աղ-զաղ	6271.
Հաջի-մալ.	5516.
Նոյն, հարաւային Գէօգչայի լեռնաշղթայի Թոփ-զաղից գէպի հարաւ, Արփաչայ և Զանախչի-չայ զետերի միջև 36 վ. Երկարու- թեամբ ձգւում է Արեւմտեան Դարալազեազի լեռնաշղթան՝ ուզդուելով գէպի Արագս. Սրա զլաւուր զազաթներն են.	
Սըշանլի	9660 ո.ո.
Դիդ-վանք	9324.
Լարա-զայտ	9240.
Թոփլու-աղըլ-գեազըլի	7140.
Թեամուրլու-դադ	6930.
Եանար-գեազըկ	6771.
Բաղարսըդ	6587.
Արդիչ	6720.
Հարազ-զադ	5632.

Վայոց-ձորի բոլոր լեռների մէջ առանձին ուշազըռութեան  
արժանի է Դայիկ-Թափա կամ Թափասի զալիկ (Դազաթնածակ)՝  
կոչուած զազաթը, որ հանգստ հրաբխային բերան է: Սա կանո-  
ձե է, միայնակ կանգնած բաւական ընդարձակ լեռնազաշտի մէջ։  
Լանջերն այնքան ուզդահայեաց են, որ անհնարին է ուղիղ գծով  
բարձրանայ, իսկ պատոյս անելով տեսում է մինչև մի ժամ ձիով  
կամ երկու հետի, լանջերը պատած են մասը, հրաբխային, կար-  
միր և մանաւանդ սև քարերով: Դազաթը ձագառածն բացուած է,  
միայն հիւսիսային կողմը փոքր ինչ աւելի թեք է և բարձր,  
այնպէս որ հիւսիսից հարաւ ձգուող գիծը (մօտ 600 քայլ) մի  
փոքր ինչ աւելի երկար կը լինի, քան արևելքից արևմուռազ ձը-  
գուողը Արևելեան լանջը ամբողջովին և հարաւայինը մասամբ  
պատած են առաւելապէս կարմիր, հրաբխային քարով, ուր խոտ  
բոլորովին չի բուենում: Ցատակում աւելի զգալի կերպով նկա-  
տելի է ձագառածն բացուածքը, ուր հալուած ձիւնից գոյացած  
ջուրը բաւական երկար ժամանակ կանգնած մում է և միայն  
օգոստոսին չորտնում: Այս մասում առաւելապէս կուտակուած են  
կարմիր, սև և մոխրագոյն հրաբխային խանձողներ, միքանիսը  
չափազանց թեթև, ծակծակոտ, միքանիսն էլ չափազանց ժանր և  
նշանձն ։)

Ցատակի հիւսիսային կողմում կայ մի հասարակ եկեղեցի իւր

7) Այս խանձողներից միշտի հետաքրքրական նմուշներ են բերի և յանձ-  
նեցի Խովհանոս թանգարակին:

գաւթով, որից բարձր միքանի տների հիմնապատճը, երկու գերեզմանաբար, առանց տապանագրերի:

Յայտնի չէ, թէ ովքեր են կառուցել այդ եկեղեցին և աըները: Յայտնի չէ նաև, թէ երբ է ժայթքել այդ հրարուղիը, միայն դէպի Արգեազ, Նաւար, Թեօթանլի, Գեօգ-Արաս, Հերէեր և մանաւանդ դէպի Մալիշկա և Մող ձգուած ու տեղուել կիտուած խանձողները ցոյց են տալիս, որ հրարուղիը ժայթքել է ոչ թէ մի, այլ բոլոր կողմերի ուղղութեամբ:

**Դետերը.**—Վայոց ձորի ամենանշանաւոր գետը Արփաշայն է, որ Աղեքսանդրապոլի մօտից հոսող համանուն գետից տարբերուելու համար ստացել է Արենելեան մակղիբը: Սկիզբն է առնում զաւախի հիւսիս—արենելեան մասում, Ալլանդեօլի բարձրաւանդակի հարաւային կողմից, Կոնգուրո-Ալանդէղ և Հիւսիսային Դարալազեազի լեռնաշղթաների միջից: Դիմաւոր ակը կոչւում է Տաշ-Թեօպրի-չայ, որ բղուում է Եսրո-Բաֆա և Թեշալ-Բաֆա լեռներից: Արփաշայը անցնելով 106 ½ վերսու արածութիւն, Դարա-Հասանլու գիւղի հանդէպ թափուում է Արաքսի մէջ:

Արփաշայի վրայ կամ միքանի կամուրջները Մի փայտէ կամուրջ ձգուում է Խոսի-սու գիւղի մօտ. մի հին, քարեայ կամուրջ ձգուում է Թեշիշ-քեանտից 2 վերսու հարաւ և կոչւում է Դաղալի-քէօրփի կամ Դալի-պերան. մի քարէ հին կամուրջ էլ կայ Մող աւերակ քաղաքից մօտ 2 վերսու հեռու, Տաշալտի գիւղի մօտ, որ այժմ վերանորոգուուած է ոստիկան Դումբաձէի ջանշերով: Մի կամուրջ ևս Արփա գիւղի մօտ, փոստային ճանապարհի վրայ: Հին, բայց այժմ բոլորովին աւեր կամուրջներից նշանաւոր է Արփա գիւղի մօտինը, որ շինել է Նորավանքի Տէր Սարգիս եպիսկոպոսը Տարսային իշխանի թոյլաւութեամբ<sup>1)</sup> (XIII դ.).

Արփաշայի գտակներն են 1) Ալագեազ կամ Ալյոթուլ-չայ և կամ Հանի-չայ, սկիզբն է առնում Գիւղալ-զարա լերան մօտից, թափուում է Արփաշայի մէջ Արզու-պշաղ գիւղի մօտ (Քըթէճ և Աւեար-գիւղերի մէջ). Երկարութիւնը է 43 վերսու: Մը մէջ թափուում են բազմաթիւ առուակներ: Մի քարէ կամուրջ ձգուում է որա վրայ Ալիխան-փայեասի գիւղից մի վերսու ներքեւ և կոչւում է Սագիր-քէօրփի: Ալագեազ-չայի վտակ Սելիմ-չայի վրայ ևս, Դարախու գիւղի մօտ, կայ մի հին, քարաշէն կամուրջ:

2) Հերէներ-չայ. սկիզբն է առնում հիւսիսային Դարալազեա-

1) Առ. Օքքեկան. 4. թ. եր. 176.

պատճեն ընդունելուն, ով ու

ունի առաջնայի և առաջնորդ իրա

դի ւերնաշղթայից, թափում է Արքաչայի մէջ Ղայեալու գիւղից փոքր ինչ վերև. երկարութիւնը 26 վերստ է:

3) Ըլվին-շայ.

4) Ջուլ-շայ, Թեղրփ-շայ վատակով. մի կամուրջ ունի Զուլ գիւղի մօտ:

5) Զիրակ-շայ կամ Ղուշչի-բիլակ-շայ.

6) Ախտա-շայ.

7) Մարտիրոս-շայ.

8) Կնիշիկ-շայ.

**Հանգեր.**—Արծաթի հանց գտնում է Կիւմուշիանէ գիւղից 3 վերստ գեղի արևելք: Օրբելիանց տիրապետութեան ժամանակ առ մշակում էր և յայտնի էր Փողանանք անունով: Այժմ անզգական մի ընկերութեան ներկայացուցիչներ հետազօտութիւններ են կատարում հանգային շերեր զանելու և բացել են յիսունից տեղի հին հորեր, սակայն գեռ և ցանկալի հետանանքի շին հասել: Բաւականաշափ հին հորեր բացուած են նաև փոքր ինչ հեռու, Ազյիկաշան գիւղի մօտ:

Կապարի փայլուկ (СВИНОВЫЙ БЛЕСКЪ) նկատելի է եայիճի գիւղից երկու վերստ գեղի հիսոխ:

Մումիա (գորշ կարմիր ներկ) և կաւարար (խոյիք և օքրա). Արփա գիւղի մօտ:

Քարածուկն. Քեշիշ-քանասի մօտ, Դայլախլու գիւղից փոքր ինչ հեռու Սուլթան-քահանսի տեղում:

**Հանգային ջրեր.**—Վայոց ձորը բաւական հարուստ է հանգային ջրերով, սակայն բոլորն էլ անխնամ են թողնուած, և շատ քչերն են օգտուում: Ամենից նշանաւորը գտնում է ցրջանի հիւս-արևելեան մասում, Զիվանշիրի և Զանգեզուրի գաւառների մօտ, Խատիսու գիւղի հանդէսի, Սա ծծմբային տաք ջուր է, 29, 5<sup>o</sup>—33<sup>o</sup> Բ. բարեխտառնութեան: Մաս 200 սատէն տարածութեան վրայ բղիսում են հինգ ազդիւրներ, որոնցից չորսը գտնում են Արքաչայի ձախ ափին, իսկ մինը՝ փոքր ինչ բարձր՝ աջ ափին: Մրանցից վերջինիս վրայ մի քարէ աւազան և մի փոքրիկ այժմ կիսաւեր սենեակ է յինուած կէս դար առաջ, իսկ միւսները գետնի մէջ փորուած կիսարաց այրեր են, կեղտառութիւնով լի: Մրանց մօտ ոչ մի յարմարութիւն, ոչ մի շէնք չկայ: Եկողները կամ բացօթեայ են անցկացնուեմ, կամ վրան են խփում: Կլիման ընդհանրապէս ցուրտ է և գիշերները սաստիկ քամի է փշում: Սբան-

չելի է, մասնաւանդ, այստեղի տեսարանները.—Հիմնալի ջրընկեցը՝ որ մի տհագին ժայռից փրփրադէզ ժայթքում է դէպի Արփաւայը, նայնպէս գեղեցիկ իւր եղբափակող անազին և բազմազան քարածայռերը, բուսականութեամբ հարուստ բարձրաւանդակը և շրջակայ լեռները:

Բացի այս հանքային ջրից կան նուե հետեալիները. ածխաթթու—երկաթային՝ (սլեքիսլո—յելենին). Սոյլան գիւղի ծովինը, ննդիջա գիւղից 3 վերստ գէպի արևելք Նողութ-գարայում գտնուածը. այստեղ կայ նուե ածխաթթու—ալկալին ջուր, (սլեքիսլո—պելոչնա), էրբէր գիւղից գէպի արևելք Նալու-գարասի ձորում, 2 ազրիւր, այստեղից 2 վերստ գէպի հիւսիս կայ ածխաթթու-ալկալին ջուր: Քեշիքննդից գէպի արևելք Շոր-գար ձորում:

**Երկաթ-ալկալիան** (յելեզօ-պելոչնա) և ածխաթթու-ալկալիան (սլեքիսլո-պելոչնա) ջուր գտնուում են 1) Արփա գիւղից 3 վերստ ներքև, Արփաչայի երկու ափին, 2) Բուլախալարում, 3) էրբափինից 2 վերստ գէպի հիւսիս՝ Գիւմուշ-բուլախի վտակի երկու ափերին, 4) վերին Տանձիկից մի վերստ գէպի արևելք Արփաչայի երկու ափերին, 5) ներքին Տանձիկից կէս վերստ գէպի հարաւ՝ Արփաչայի ձախ ափին, և 6) Մալբշից  $\frac{1}{2}$  վերստ գէպի հիւսիս, հովտում: Այս բոլորից շատ աւելի նշանաւոր է Ենկիչայի և Նուրդգուլազի ճանապարհի վրայ, ձորի մէջ գտնուած ազրիւրը, որ յայտնի է Գուռ կամ Թոսի-ջուր անունով:

**Դլիման.** Դարալագեազի ոչ մի գիւղում օգերեսյթարանական կայարան գետն հասաւառուած չէ, ուստի և կիմայի վերաբերութեամբ գիւղական ոչ մի որոշում կարելի չէ անել: Միայն գիւղացիների վկայութեամբ կարելի է ասել, որ ձմեռն սկսուում է նոյեմբերի սկզբին և տեսում մինչեւ ապրիլ, շատ անգամ սաստիկ ցրտեր և բքեր անելով: Զմեռը յաճախ ձեւն է գալիս, երբեմն մինչեւ  $\frac{1}{2}$  արշին խորութեամբ: Դարնանը յաճախ անձրև է տեղում, մի մի անգամ կարկտախառն: Ամառը մեղմ է, աշունը՝ ցուրտ:

Մի քանի հովհաններում, բնշակս Արփաչայի արևմտեան մասում՝ Մող, Այեար, Արփա, էրթիչ, Ղոյթուլ գիւղերում, կիման միանգամայն տարբեր է. այստեղ ամառը սասարիկ շոգ է, ձմեռը մեղմ, աշունը հիանալի, և գարունը՝ անձրեային:

Դատելով օգերեսյթական քարտէզով, Վայոց ձորի տարեկան միջին բարեխառնութիւնը համարում է 5, 5<sup>o</sup> Բ:

Բուռակիանութիւնն.—Դարալազգավի բուռականութիւնը շատ հարուստ է, սակայն մասնապիտօքն գեղ ևս ուստամբասիրուած չէ: Աւատի և այսուեղ մնաք ոչինչ չենք կարսդ ասել բացի այն, որ մեծ մասամբ տիրուած է սոսորին—արգեան բուռականութիւնը՝ մասնաւանդ Արփաջայի ակուսնքներին մաս Շատ յաճախ պատահում են այդ սոսորին—արգեան բուռականութիւնն երկու տիրական տեսակներ՝ հարդառածազիկ (*Anemone narcissiflora*) և խաչափայտ (*Betonica grandiflora*), իսկ սոսորին—արգեան մարգազետիւնների գարդզը՝ արեւելան խաչիազը (*Papaver orientale*) առառաջենամբ հանդիպում են Գեօ-գաղի հիմնալի, որոտառեղիներուած:

Դարավագիազը բաւական հարուստ է անտուռներով, որոնց  
սփռում են Արքայայի տկունքների, Հերուսել, Մարտիրոս, Զանի,  
Այսուի, Ղառշուղ, Գիւնելյանքների և Հորս գիւղերի մաս կան նաև  
մացաներ Աղ-թիլիսա, Վարդանէս, Ղարաղայա, Ղարախլու, Հոս-  
տուն, Բուլլուլուն և Էրդասիին գիւղերի մաս:

Այս անուանները մեծ մասամբ հնոր են, 30—40 տարուայ ընթացքում յաջակացած, և մեծ մասամբ բազկացած են կազմի, գեհի, թեղի, կարմրան (գրեսնչուց), ուրի և այլ ժամաներից:

Ընդհանուրագիս ճանապարհներ լինելու պատճառով այս ան-  
տառանիքից շատ չեն կարողանում օգտուել և ազգաբնակչութեան  
վառելանիւթը մեծ մասամբ քարորդ է կազմում։ Եաւ զիւղեր,  
որոնք բաւական հեռու են անտառանիքից, մեծ նեղութիւն են կը-  
րում ածուել չափանիալու պատճառով։

Ըստանի կենդանիներից սակաւաթիւ է միայն գոմեցը, որպէսհան սայրեր չինելու պատճառով չի հարկադրում:

Վայրի գաղաներից մեծ քանակութեամբ կան գայլեր և արջեր; Ենթէիկ գիւղում եղած միջոցին՝ գայլերի վոհմակը մի զիշերում մաս 200 ռիմար էր պատառառել: